Հասցեատեր՝

«Գանձասար ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ gandzasarfc21@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03.10.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ԱԽ-059
Խախտում՝	1. «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Խաչատրյանի (30340) կողմից մրցակցի հասցեին հայհոյելը և վիճաբանություն անելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ) 2. «Գանձասար ՖԱ» ՀԿ-ի պաշտոնատար անձ Վլադիկ Առաքելյանի կողմից մրցակից թիմի ադմինիստրատորի հետ վիճաբանություն անելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 3. Ակումբի անվտանգության աշխատակիցների բացակայությունը (Հավելված 1 Ա, 34-րդ կետ) 4. Ակումբի կողմից մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելը, երկրպագուների խաղադաշտ ներխուժելը՝ վիճաբանությանը մասնակցելու նպատակով (Հավելված 1 Ա, 21-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խումբ
Խաղ՝	«Գանձասար» - «Ալաշկերտ-2», 26.09.2023թ. (3:1)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետով՝ «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Խաչատրյանի (30340) կողմից մրցակցի հասցեին հայհոյելու և վիճաբանություն անելու համար վերջինիս որակազրկել (2) երկու խաղով և «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

Որակազրկումը տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 26-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։

2. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետով և 26-րդ հոդվածով՝ հրահանգել «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին այլևս բացառել 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով մատնանշված համանման դեպքերը, մասնավորապես բացառել ակումբի ֆուտբոլային սուբյեկտների կողմից ոչ սպորտային վարքագծի դրսևորումները։ Հրահանգի կատարումը չապահովելու պարագայում այլևս կիրառել ավելի խիստ պատասխանատվության միջոցներ։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։